**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/14353-2026

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-1281-13.03.2026-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2026 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 358 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պետրոս Քացախյան

Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող

Հեռ. 010515686

Էլ փոստ՝ petros.qatsakhyan@gov.am

«ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱ-ՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-1281-13.03.2026-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, քննարկելով ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը, ընդհանուր առմամբ դրական գնահատելով առաջարկվող կարգավորման միտումները և դրդապատճառները, ինչպես նաև հաշվի առնելով խաղային գործունեության ոլորտում պետական քաղաքականության առաջնահերթությունները, հայտնում է հետևյալը.

Նախագծերով առաջարկվող՝ քաղաքացիների կողմից խաղերին մասնակցության սահմանափակումների և արգելքների վերաբերյալ կարգավորումները, իրենց բովան-դակությամբ ուղղված լինելով սոցիալական ռիսկերի նվազեցմանը և պատասխանատու խաղի գործիքակազմի զարգացմանը, կարող են լիարժեք և արդյունավետ կիրառվել միայն «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքով սահմանված խաղային ոլորտի կարգավորման օպերատորի ինստիտուտի ներդրման և դրա լիարժեք գործարկման պայմաններում:

«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մասով հարկ է նշել, որ նախագծերով առաջարկվող մի շարք կարգավորումներ ներկայումս կիրառելի չեն՝ հաշվի առնելով, որ բացակայում են դրանց ապահովման համար անհրաժեշտ ինքնաշխատ գործիքներն ու գործնական մեխանիզմները, որոնց գործարկմամբ հնարավոր կլինի ապահովել համապատասխան գործընթացների իրականացումը:

Ըստ այդմ, նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկում ենք՝

1. Ձեռնպահ մնալ նախագծով առաջարկվող՝ սպառողական վարկ ունեցող և վարկային պարտավորությունների ընդհանուր ծավալը տարեկան եկամուտների նկատմամբ որոշակի շեմով սահմանափակելու կարգավորումից՝ հաշվի առնելով, որ դրա կիրառման համար անհրաժեշտ տեղեկատվական և տեխնիկական նախադրյալները ներկայումս ամբողջությամբ ձևավորված չեն: Մասնավորապես, նշված կարգավորման կիրառումը ենթադրում է վարկային պարտավորությունների վերաբերյալ ամբողջական և հավաստի տեղեկատվության առկայություն, որը հանդիսանում է բանկային գաղտնիք:

Խաղային գործունեության կարգավորման օպերատորի գործարկումից հետո օպերատորը կարող է հասանելիություն ունենալ միայն այն տվյալներին, որոնց վերաբերյալ

պետությունը վարում է համապատասխան շտեմարաններ:

2. Ձեռնպահ մնալ նախագծով առաջարկվող՝ խաղերին մասնակցության թույլատրելի չափը յուրաքանչյուր տարվա համար հայտարարագրված տարեկան եկամտի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ սահմանելու կարգավորումից՝ հաշվի առնելով, որ դրա գործնական կիրառումը ներկայումս խնդրահարույց է և վաղաժամ:

Միաժամանակ, տարեկան եկամտի չափի վրա հիմնված սահմանափակումը կարող է չարտացոլել անձի իրական ֆինանսական կարողությունները, քանի որ հնարավոր են իրավիճակներ, երբ անձը տվյալ տարում հայտարարագրված եկամուտ չունենալով հանդերձ ունի զգալի խնայողություններ, ինչի արդյունքում նշված մոտեցումը չի ապահովում կարգավորման նպատակային և համաչափ կիրառություն:

3. Հստակեցնել պետական բյուջեի ֆինանսավորմամբ կամ համաֆինանսա-վորմամբ իրականացվող ծրագրերից օգտվող շահառուների շրջանակը, քանի որ որոշ ծրագրեր կրում են տնտեսական կամ խթանիչ բնույթ և կապված չեն անձի սոցիալական վիճակի հետ:

Նշվածի համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել, որ եկամտային հարկի վերադարձի ծրագիրը պարունակում է որոշակի սոցիալական տարրեր և առաջարկվում է քննարկել նոր շահառուների հետ կապված կարգավորումները:

Միաժամանակ Կառավարությունն առաջարկում է.

1. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող 6.2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Սահմանել արգելք այն բանկային քարտերի օգտագործման համար, որոնց հաշվին մուտքագրվում են անձի սոցիալական ապահովության վիճակի հետ կապված նպաստի միջոցներ»:

Նախագծի նույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Սահմանել արգելք այն բանկային քարտերի օգտագործման համար, որոնց հաշվին մուտքագրվում են կենսաթոշակային միջոցներ»:

2. «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում՝ 1-ին հոդվածով լրացվող 5. 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Սահմանել արգելք այն բանկային քարտերի օգտագործման համար, որոնց հաշվին մուտքագրվում են անձի սոցիալական ապահովության վիճակի հետ կապված նպաստի միջոցներ»:

Նախագծի նույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը շարադրել հետևյալ բովան-դակությամբ՝ «Սահմանել արգելք այն բանկային քարտերի օգտագործման համար, որոնց հաշվին մուտքագրվում են կենսաթոշակային միջոցներ»:

3. «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ Կառավարությունը սկզբունքային առարկություններ չունի, սակայն առաջարկում է՝

3.1. Սահմանել, որ օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից՝ հաշվի առնելով, որ խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության գործ-ընթացը գտնվում է ընթացքի մեջ, և նախագծով նախատեսված սահմանափակումների կիրառման համար անհրաժեշտ տեխնիկական հնարավորությունների ապահովումը հնարավոր կլինի միայն օպերատորի գործարկումից հետո: Նշված պայմաններում, ավելի

վաղ ժամկետ սահմանելու դեպքում, սահմանափակումների ապահովման պարտականությունը փաստացի կդրվի խաղային գործունեության կազմակերպիչների վրա, ինչը ենթադրում է նրանց կողմից անձնական տվյալների մշակման և համապատասխան տեղեկատվական բազաների հասանելիության անհրաժեշտություն և կարող է առաջացնել տվյալների պաշտպանության և ազգային անվտանգության հետ կապված ռիսկեր:

3.2. Նախագծի 1-ին հոդվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հանդիսանում են՝

6) օրենսդրությամբ սահմանված կարգով ընտանիքների սոցիալական գնահատման համակարգում հաշվառված ընտանիքի անդամ կամ

7) պետական սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող ընտանիքի անդամ»:

Ըստ այդմ, Կառավարությունն առաջարկում է վերանայել նախագծի 1-ին հոդվածի մասերի համարակալումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 358 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՋԵԿՈՒՑՈՂ)
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Էդգար Ջաքարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-1281-13.03.2026-ՏՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

28.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1281-13.03.2026-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Խաղային գործունեության կարգավորման մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-263-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 47-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 3-րդ կետում «ճանաչվել» բառից առաջ լրացնել «գտնվում են սնանկության վարույթում կամ» բառերով.

2) 1-ին մասի 4-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

3) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 5-րդ, 6-րդ եւ 7-րդ կետերով.

«5) օգտվում են պետական բյուջեի ֆինանսավորմամբ կամ համաֆինանսավորմամբ իրականացվող սուբսիդավորման որեւէ ծրագրից.

6) հանդիսանում են «Պետական նպաստների մասին» օրենքով նախատեսված որեւէ տեսակի նպաստի նպաստառու.

7) ունեն սպառողական վարկ եւ վարկի ընդհանուր ծավալը գերանցանցում է տարեկան եկամուտների 40%-ը:».

3) 2-րդ մասի 4-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

4) 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով՝

«5) օրենքով նախատեսված կենսաթոշակային տարիքը լրացած քաղաքացիների մասնակցությունը խաղերին, եթե տվյալ անձանց եկամտի միակ աղբյուրը նշանակված կենսաթոշակն է:»:

Հոդված 2. Օրենքի 49-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ.

«2.Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց մասնակցությունը խաղերին արգելվում է քաղաքացու դիմումի հիման վրա՝ դիմումի ներկայացման հաջորդ օրվանից 5 տարի ժամկետով: Ընդ որում յուրաքանչյուր ժամկետի ավարտից հետո այն կրկին երկարացվում է նույն ժամկետով, եթե ժամկետի վերջին հինգ օրը անձը դիմում չի ներկայացնում արգելքը վերացնելու մասին:».

2) 3-րդ մասը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ.

«3.Խաղային ինտերակտիվ հարթակով քաղաքացու կողմից ինքնաարգելափակման միջոցը (self-exclusion) կիրառելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դիմումը համարվում է ներկայացված:».

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 4-րդ մասով՝

«4.Խաղային ինտերակտիվ հարթակում կազմակերպիչը պարտավոր է ապահովել հստակ տեսանելի ինքնաարգելափակման (self-exclusion) միջոցի առկայությունը: Ինքնաարգելափակման (self-exclusion) միջոցը կիրառվելվելուց հետո կազմակերպիչը պարտավոր է դիմումը անմիջապես փոխանցել օպերատորին:»:

Հոդված 3. Օրենքի 50-րդ հոդվածում՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 1.1.-ին մասով՝

«1.1. Քաղաքացիների կողմից խաղերին մասնակցության թույլատրելի չափ է համարվում յուրաքանչյուր տարվա համար հայտարարագրված տարեկան եկամտի 20%-ը:».

2) 2-րդ մասում «մասով» բառը փոխարինել «եւ 1.1-ին մասերով» բառերով, թվերով եւ կետադրական նշաններով:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1281[1]-13.03.2026-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-1-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 6.2-րդ հոդվածով.

«Հոդված 6.2. Քաղաքացիների՝ խաղային գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին մասնակցության սահմանափակումների ընդհանուր կանոնները

1. Արգելվում է այն քաղաքացիների մասնակցությունը սույն օրենքով նախատեսված շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին, որոնք՝

1) օգտվել են պետական բյուջեի կողմից ֆինանսավորվող՝ արտակարգ եւ տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքներով պայմանավորված՝ Կառավարության սահմանած աջակցության որեւէ ծրագրից, եւ աջակցության տրամադրման իրավական ակտով սահմանված է խաղերին մասնակցության սահմանափակում.

2) օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառված են ընտանիքների սոցիալական գնահատման համակարգում եւ ընտանիքի անապահովության հիմքով իրականացվող ծրագրի շահառու, ինչպես նաեւ պետական սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող անձինք են.

3) գտնվում են սնանկության վարույթում կամ ճանաչվել են սնանկ կամ ունեն պետական բյուջեի նկատմամբ չմարված (չներված) պարտավորություններ.

4) հաշվառված են կախվածությունների բուժման ազգային կենտրոնում.

5) օգտվում են պետական բյուջեի ֆինանսավորմամբ կամ համաֆինանսավորմամբ իրականացվող սուբսիդավորման որեւէ ծրագրից.

6) հանդիսանում են «Պետական նպաստների մասին» օրենքով նախատեսված որեւէ տեսակի նպաստի նպաստառու.

7) ունեն սպառողական վարկ եւ վարկի ընդհանուր ծավալը գերանզանցում է տարեկան եկամուտների 40%-ը.

8) օրենքով նախատեսված կենսաթոշակային տարիքը լրացած քաղաքացիների մասնակցությունը խաղերին, եթե տվյալ անձանց եկամտի միակ աղբյուրը նշանակված կենսաթոշակն է.

9) ներկայացրել են սույն օրենքի 6.3.-րդ հոդվածի 1-ին մասով դիմում:

2. Քաղաքացիների կողմից խաղերին մասնակցության թույլատրելի չափ է համարվում յուրաքանչյուր տարվա համար հայտարարագրված տարեկան եկամտի 20%-ը :

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձանց նկատմամբ սույն հոդվածով սահմանված սահմանափակումները կիրառելի չեն:

4. Լիազոր մարմինը ապահովում է սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված տեղեկատվության հիման վրա նույնականացման արդյունքով քաղաքացու մասնակցությունը շահումով խաղերին, ինտերնետ շահումով խաղերին արգելված լինելու հանգամանքի պարզման հնարավորության ստեղծումը:

5. Սույն հոդվածով նախատեսված տեղեկատվությունը Կառավարության սահմանած կարգով վեբկայքի միջոցով տրամադրվում է լիազոր մարմնին, բացառությամբ այն անձանց վերաբերող տեղեկատվության, որն օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն: Սույն հոդվածով նախատեսված սահմանափակման կիրառման նպատակով այն անձանց նույնականացումը, որոնց վերաբերյալ տեղեկատվությունն օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն, իրականացվում է խաղացողների կողմից խաղային հաշիվների համալրումը սույն օրենքով սահմանված կարգով անկանխիկ եղանակով իրականացնելու ժամանակ՝ Լիազոր մարմնի եւ Կենտրոնական բանկի համատեղ իրավական ակտով սահմանված կարգով:

6. Խաղացողի կողմից խաղի մասնակցության համար օգտագործվող համապատասխան համացանցային հաղորդակարգի (IP) հասցեի պարբերաբար փոփոխությունը կարող է համարվել ռիսկային եւ հիմք հանդիսանալ խաղացողի նկատմամբ սույն մասով նախատեսված սահմանափակումները կիրառելու համար: Սույն մասով նախատեսված ռիսկային համարվելու չափանիշները եւ սահմանափակումների կիրառման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 6.3-րդ հոդվածով.

«Հոդված 6.3. Քաղաքացու կողմից իր մասնակցության սահմանափակման կարգը

1. Լիազոր մարմնին ներկայացվող դիմումով քաղաքացին կարող է պահանջել արգելելու իր մասնակցությունը շահումով խաղերին եւ ինտերնետ շահումով խաղերին: Լիազոր մարմինը ապահովում է նշված տեղեկատվության հասանելիությունը կազմակերպչին:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց մասնակցությունը խաղերին արգելվում է քաղաքացու դիմումի հիման վրա՝ դիմումի ներկայացման հաջորդ օրվանից 5 տարի ժամկետով:

Ընդ որում յուրաքանչյուր ժամկետի ավարտից հետո այն կրկին երկարացվում է նույն ժամկետով, եթե ժամկետի վերջին հինգ օրը անձը դիմում չի ներկայացնում արգելքը վերացնելու մասին:

3. Ինտերնետ շահումով խաղի կազմակերպչի ինտերնետային էջով (կայքով) քաղաքացու կողմից ինքնաարգելափակման միջոցը (self-exclusion) կիրառելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դիմումը համարվում է ներկայացված:

4. Ինտերնետ շահումով խաղի կազմակերպիչը իր ինտերնետային էջում (կայքում) պարտավոր է ապահովել հստակ տեսանելի ինքնաարգելափակման (self-exclusion) միջոցի առկայությունը: Ինքնաարգելափակման (self-exclusion) միջոցը կիրառվելվելուց հետո կազմակերպիչը պարտավոր է դիմումը անմիջապես փոխանցել լիազոր մարմնին:»:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 1.2.-րդ մասում՝

1) «ժբ» կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) լրացնել հետեյալ բովանդակությամբ «ժգ» կետով՝

«ժգ) ինքնաարգելափակման (self-exclusion) միջոց:»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1281[2]-13.03.2026-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վիճակախաղերի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-3-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետեյալ բովանդակությամբ նոր 5.4-րդ հոդվածով.

«Հոդված 5.4. Քաղաքացիների՝ խաղային գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին մասնակցության սահմանափակումների ընդհանուր կանոնները

1. Արգելվում է այն քաղաքացիների մասնակցությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տոտալիզատորների (այդ թվում՝ ինտերնետ տոտալիզատորների), որոնք՝

1) օգտվել են պետական բյուջեի կողմից ֆինանսավորվող՝ արտակարգ եւ տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքներով պայմանավորված՝ Կառավարության սահմանած աջակցության որեւէ ծրագրից, եւ աջակցության տրամադրման իրավական ակտով սահմանված է խաղերին մասնակցության սահմանափակում.

2) օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառված են ընտանիքների սոցիալական գնահատման համակարգում եւ ընտանիքի անապահովության հիմքով իրականացվող ծրագրի շահառու, ինչպես նաեւ պետական սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող անձինք են.

3) գտնվում են սնանկության վարույթում կամ ճանաչվել են սնանկ կամ ունեն պետական բյուջեի նկատմամբ չմարված (չներված) պարտավորություններ.

4) հաշվառված են կախվածությունների բուժման ազգային կենտրոնում.

5) օգտվում են պետական բյուջեի ֆինանսավորմամբ կամ համաֆինանսավորմամբ իրականացվող սուբսիդավորման որեւէ ծրագրից.

6) հանդիսանում են «Պետական նպաստների մասին» օրենքով նախատեսված որեւէ տեսակի նպաստի նպաստառու.

7) ունեն սպառողական վարկ եւ վարկի ընդհանուր ծավալը գերանզանցում է տարեկան եկամուտների 40%-ը.

8) օրենքով նախատեսված կենսաթոշակային տարիքը լրացած քաղաքացիների մասնակցությունը խաղերին, եթե տվյալ անձանց եկամտի միակ աղբյուրը նշանակված կենսաթոշակն է.

9) ներկայացրել են սույն օրենքի 5.5.-րդ հոդվածի 1-ին մասով դիմում:

2. Քաղաքացիների կողմից տոտալիզատորների (այդ թվում՝ ինտերնետ տոտալիզատորների) մասնակցության թույլատրելի չափ է համարվում յուրաքանչյուր տարվա համար հայտարարագրված տարեկան եկամտի 20%-ը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձանց նկատմամբ սույն հոդվածով սահմանված սահմանափակումները կիրառելի չեն:

4. Լիազոր մարմինը ապահովում է սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված տեղեկատվության հիման վրա նույնականացման արդյունքով քաղաքացու մասնակցությունը տոտալիզատորների (այդ թվում՝ ինտերնետ տոտալիզատորների) արգելված լինելու հանգամանքի պարզման հնարավորության ստեղծումը:

5. Սույն հոդվածով նախատեսված տեղեկատվությունը Կառավարության սահմանած կարգով վեբկայքի միջոցով տրամադրվում է լիազոր մարմնինին, բացառությամբ այն անձանց վերաբերող տեղեկատվության, որն օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն: Սույն հոդվածով նախատեսված սահմանափակման կիրառման նպատակով այն անձանց նույնականացումը, որոնց վերաբերյալ տեղեկատվությունն օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն, իրականացվում է խաղացողների կողմից խաղային հաշիվների համալրումը սույն օրենքով սահմանված կարգով անկանխիկ եղանակով իրականացնելու ժամանակ՝ Լիազոր մարմնի եւ Կենտրոնական բանկի համատեղ իրավական ակտով սահմանված կարգով:

6. Խաղացողի կողմից տոտալիզատորների (այդ թվում՝ ինտերնետ տոտալիզատորների) մասնակցության համար օգտագործվող համապատասխան համացանցային հաղորդակարգի (IP) հասցեի պարբերաբար փոփոխությունը կարող է համարվել ռիսկային եւ հիմք հանդիսանալ խաղացողի նկատմամբ սույն մասով նախատեսված սահմանափակումները կիրառելու համար: Սույն մասով նախատեսված ռիսկային համարվելու չափանիշները եւ սահմանափակումների կիրառման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 5.5-րդ հոդվածով.

«Հոդված 5.5. Քաղաքացու կողմից իր մասնակցության սահմանափակման կարգը

1. Լիազոր մարմնին ներկայացվող դիմումով քաղաքացին կարող է պահանջել արգելելու իր մասնակցությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տոտալիզատորներին (այդ թվում՝ ինտերնետ տոտալիզատորներին): Լիազոր մարմինը ապահովում է նշված տեղեկատվության հասանելիությունը կազմակերպչին:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց մասնակցությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տոտալիզատորներին (այդ թվում՝ ինտերնետ տոտալիզատորներին) արգելվում է քաղաքացու դիմումի հիման վրա՝ դիմումի ներկայացման հաջորդ օրվանից 5 տարի ժամկետով: Ընդ որում յուրաքանչյուր ժամկետի ավարտից հետո այն կրկին երկարացվում է նույն ժամկետով, եթե ժամկետի վերջին հինգ օրը անձը դիմում չի ներկայացնում արգելքը վերացնելու մասին:

3. Կազմակերպչի ինտերնետային կայքով քաղաքացու կողմից ինքնաարգելափակման միջոցը (self-exclusion) կիրառելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դիմումը համարվում է ներկայացված:

4. Կազմակերպիչը իր ինտերնետային կայքում պարտավոր է ապահովել հստակ տեսանելի ինքնաարգելափակման (self-exclusion) միջոցի առկայությունը: Ինքնաարգելափակման (self-exclusion) միջոցը կիրառվելվելուց հետո կազմակերպիչը պարտավոր է դիմումը անմիջապես փոխանցել լիազոր մարմնին:»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Առաջարկվող օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում խաղային գործունեության, հատկապես՝ ինտերնետ շահումով խաղերի և առցանց խաղադրույքների ծավալների աննախադեպ աճով, գործող սահմանափակումների անբավարարությամբ, ինչպես նաև սոցիալական և ֆինանսական ծանր հետևանքներով, որոնք առավել սուր դրսևորվում են սոցիալապես խոցելի խմբերի շրջանում:

1. Խնդրի մասշտաբը և վիճակագրական հիմնավորումը

2017–2025 թվականների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ խաղադրույքների ընդհանուր ծավալը Հայաստանում աճել է ավելի քան 35 անգամ՝ 2017 թվականի մոտ 0.21 տրիլիոն դրամից հասնելով 2025 թվականի մոտ 7.41 տրիլիոն դրամի:

Ստորև ներկայացված գծապատկերում առավել տեսանելի է խաղադրույքների ծավալների կտրուկ և անհամաչափ աճը 2017–2025 թվականներին:

Կապույտ գույնով ներկայացված են խաղադրույքների ընդհանուր ծավալները:

Նարնջագույն գույնով՝ ոլորտի ընկերությունների կողմից վճարված հարկերն ու տուրքերը::

Կարմիր գույնով՝ հարկերի տեսակարար կշիռը խաղադրույքների ընդհանուր ծավալում:

Գծապատկերն ակնհայտորեն ցույց է տալիս, որ խաղադրույքների ծավալների բազմակի աճին զուգահեռ հարկերի հարաբերական բաժինը նվազել է՝ ընդգծելով ոլորտի անհամաչափ զարգացումը:



Միևնույն ժամանակ, ոլորտի կողմից վճարված հարկերի և տուրքերի տեսակարար կշիռը խաղադրույքների ընդհանուր ծավալում չի աճել համաչափ կերպով: Ընդհակառակը՝ մինչև 2024 թվականը այն նվազել է՝ 2017 թվականի շուրջ 1.8 տոկոսից հասնելով 2022–2023 թվականներին մոտ 0.4 տոկոսի, իսկ 2025 թվականին կազմելով մոտ 1 տոկոս:

Այս իրավիճակը ցույց է տալիս, որ ոլորտը զարգացել է ծայրահեղ արագ և անհամաչափ կերպով: խաղադրույքների ծավալները բազմապատկվել են, մինչդեռ դրանց սոցիալական հետևանքների կանխարգելման և ռիսկերի զսպման պետական գործիքակազմը չի զարգացել նույն չափով: Սա նշանակում է, որ խաղային գործունեության հասանելիության աճը շատ ավելի արագ է եղել, քան դրա նկատմամբ վերահսկողության, կանխարգելման և սոցիալական պաշտպանության միջոցառումների զարգացումը:

Փաստացի, այսօր խաղային միջավայրը տեղափոխվել է յուրաքանչյուր քաղաքացու հեռախոս, այսինքն՝ **կազինոն հայտնվել է յուրաքանչյուր մարդու գրպանում**: Եթե նախկինում խաղային գործունեությանը մասնակցելու համար անհրաժեշտ էր այցելել որոշակի վայր, ապա այժմ խաղադրույք կատարել հնարավոր է ցանկացած պահի, ցանկացած վայրից, նույնիսկ տնային պայմաններում՝ անկողնում պառկած, մի քանի վայրկյանի ընթացքում: Այս հասանելիությունը կտրուկ բարձրացնում է կախվածության, ֆինանսական կործանման և սոցիալական ճգնաժամի ռիսկը:

2. Սոցիալական պաշտպանության և սոցիալական արդարության հիմնավորումը

Առաջարկվող սահմանափակումները հիմնված են ոչ թե պատժիչ մոտեցման, այլ սոցիալական պաշտպանության, սոցիալական արդարության և պետական միջոցների նպատակային օգտագործման սկզբունքների վրա:

Այն խմբերը, որոնց համար առաջարկվում է խաղերին մասնակցության սահմանափակում, սոցիալապես առավել խոցելի շերտերն են, որոնց եկամուտները կամ ձևավորվում են պետական աջակցության հաշվին, կամ ունեն սահմանափակ և անբավարար բնույթ, կամ արդեն իսկ գտնվում են ծանր ֆինանսական դրության մեջ:

ա) Սուբսիդավորվող ծրագրերից օգտվող անձինք

Պետության կողմից սուբսիդավորվող կամ համաֆինանսավորվող ծրագրերը նախատեսված են որոշակի հանրային, սոցիալական կամ տնտեսական խնդիրների մեղմման, քաղաքացիների կենսապայմանների բարելավման և սոցիալական աջակցության համար: Եթե այդ միջոցներից օգտվող քաղաքացիները միաժամանակ ներգրավվում են բարձր ռիսկայնությամբ խաղային գործունեության մեջ, ապա առաջանում է ակնհայտ հակասություն՝ պետական միջոցների սոցիալական նպատակադրումն անուղղակիորեն կարող է վերածվել խաղային շրջանառության աղբյուրի: Պետական աջակցությունը չի կարող և չպետք է ծառայեցվի խաղային միջավայրի սնուցմանը:

բ) Նպաստառուներ

Նպաստառուներին պետական աջակցություն է տրամադրվում անապահովության, անաշխատունակության կամ այլ սոցիալական հանգամանքներով պայմանավորված: Այդ աջակցությունը կոչված է ապահովելու նվազագույն կենսապայմաններ, այլ ոչ թե մասնակցություն բարձր ռիսկայնությամբ խաղային գործունեությանը: Նպաստի շահառուների մասնակցությունը խաղերին հակասում է սոցիալական աջակցության տրամաբանությանը և խորացնում է նրանց սոցիալական խոցելիությունը, քանի որ վերջին հաշվով այդ միջոցները դուրս են գալիս ընտանիքի կենսական կարիքների սպասարկումից և վերածվում խաղային կորուստների:

գ) Սնանկության վարույթում գտնվող անձինք

Սնանկության վարույթում գտնվող քաղաքացին արդեն իսկ գտնվում է ֆինանսական ծանր վիճակում: Նման անձի մասնակցությունը խաղային գործունեությանը ոչ միայն չի լուծում նրա պարտքային խնդիրները, այլև մեծացնում է ֆինանսական ճգնաժամի խորացման, պարտավորությունների ավելացման և հետագա սոցիալական անկայունության ռիսկը: Խաղային գործունեությունը այս խմբի համար առանձին վտանգ է ներկայացնում, քանի որ խոցելի ֆինանսական վիճակում գտնվող անձինք առավել հաճախ են ընկնում «կորուստը հետ բերելու» վտանգավոր վարքային ծուղակը:

դ) Բարձր վարկային բեռ ունեցող անձինք

Այն քաղաքացիները, որոնց սպառողական վարկային պարտավորությունները գերազանցում են տարեկան եկամտի 40 տոկոսը, արդեն իսկ ունեն բարձր ֆինանսական ռիսկայնություն: Նրանց կողմից խաղային գործունեությանը մասնակցելը կարող է բերել նոր պարտքերի, վարկերի վերաֆինանսավորման, վճարունակության կորստի և ընտանիքի սոցիալական վիճակի կտրուկ վատթարացման: Խաղային գործունեության սահմանափակումը այս խմբի համար հիմնավորված է հենց ֆինանսական ինքնապաշտպանության տրամաբանությամբ:

ե) Միայն կենսաթոշակով ապրող կենսաթոշակառուներ

Կենսաթոշակը սոցիալական պաշտպանության գործիք է և տրամադրվում է այն հիմքով, որ քաղաքացին, որպես կանոն, այլևս չի աշխատում կամ ունի սահմանափակ աշխատունակություն: Եթե տվյալ անձի եկամտի միակ աղբյուրը կենսաթոշակն է, ապա այդ միջոցները պետք է ծառայեն կենսական կարիքների բավարարմանը՝ սնունդ, դեղորայք, կոմունալ վճարումներ, կենցաղային ապահովում: Տրամաբանական և արդարացված չէ, որ գործող աշխատող քաղաքացիների կողմից վճարվող հարկերով ձևավորված միջոցները վերածվեն բարձր ռիսկայնությամբ խաղային գործունեության ֆինանսավորման աղբյուրի:

զ) Տարեկան եկամտի 20 տոկոսի սահմանաչափ

Քաղաքացիների կողմից խաղերին մասնակցության առավելագույն շեմի կապակցումը հայտարարագրված տարեկան եկամտի հետ ունի պատասխանատու խաղի սկզբունքից բխող տրամաբանություն: Այն թույլ է տալիս նվազեցնել անհամաչափ կորուստների, չհիմնավորված ֆինանսական ռիսկերի և ընտանեկան բյուջեների կործանման հավանականությունը: Երբ խաղային մասնակցությունը բոլորովին անջատված է անձի իրական ֆինանսական կարողությունից, ստեղծվում է միջավայր, որտեղ խաղը դառնում է ոչ թե ժամանցի տարր, այլ ինքնակործանման մեխանիզմ:

Այսպիսով, առաջարկվող սահմանափակումները միտված են ոչ թե քաղաքացիներին պատժելուն կամ նրանց ազատությունը սահմանափակելուն, այլ՝

- պաշտպանելու սոցիալապես խոցելի խմբերին,
- կանխելու նրանց ֆինանսական վիճակի հետագա վատթարացումը,
- պահպանելու պետական աջակցության սոցիալական նպատակադրումը,
- և նվազեցնելու խաղամոլությամբ պայմանավորված ընտանեկան ու հասարակական վնասները:

3. Ինքնաարգելափակման պարտադիր մեխանիզմի հիմնավորումը

Առաջարկվող նախագծի առանցքային նորամուծություններից է ինտերնետ շահումով խաղերի կազմակերպիչների համար **պարտադիր ինքնաարգելափակման (self-exclusion) մեխանիզմի** սահմանումը:

Խաղամոլության առանձնահատկությունն այն է, որ կախվածության կամ ռիսկային վարքագծի փուլում գտնվող անձը հաճախ գիտակցում է խնդիրը, սակայն չունի դրանից արագ և

արդյունավետ դուրս գալու տեխնիկական ու իրավական հնարավորություն: Գործող կամ նախկինում քննարկված կարգավորումների պայմաններում հաճախ առաջացել են իրավիճակներ, երբ քաղաքացին, ցանկանալով դադարեցնել իր մասնակցությունը խաղերին, հանդիպել է բարդ, երկարաձգված կամ գրեթե անիրագործելի ընթացակարգերի: Նման պայմաններում շատերը չեն կարողանում ժամանակին կանգ առնել և շարունակում են կրել նոր կորուստներ:

Այս խնդրի լուծման համար առաջարկվում է օրենսդրորեն պարտավորեցնել կազմակերպիչներին իրենց ինտերնետային էջերում և բջջային հավելվածներում ապահովել հստակ տեսանելի, առանձին առանձնացված, հեշտ կիրառելի ինքնաարգելափակման միջոց:

Ավելին, նախագծում նախատեսված կարգավորումը պետք է գնահատել ոչ թե մեկ կազմակերպչի ներսում գործող ներքին սահմանափակման, այլ ամբողջ ոլորտում գործող միասնական պաշտպանական գործիքի տեսանկյունից:

Այս կառուցակարգի էությունը կայանում է նրանում, որ քաղաքացին, արգելափակելով իրեն մեկ հարթակում, փաստացի մտնում է համակարգային արգելափակման ռեժիմի մեջ, որի արդյունքում նա չի կարողանա խաղային հաշիվ բացել նաև այլ կազմակերպիչների կայքերում: Այստեղ է կարգավորման ամենակարևոր պաշտպանական արժեքը. այն չի սահմանափակվում մեկ օպերատորի ներսում հաշվեհամարի փակումով, այլ կանխում է, որ անձը հուզական պահի կամ փոշմանելու հետևանքով պարզապես անցնի մեկ այլ հարթակ և շարունակի նույն կործանարար վարքագիծը:

Սա սկզբունքային նշանակություն ունի, քանի որ խաղային կախվածություն ունեցող անձանց մոտ շատ տարածված է նույն պահին որոշում կայացնել կանգ առնելու մասին, իսկ կարճ ժամանակ անց՝ արդեն այլ հարթակում կրկին գրանցվել և շարունակել խաղը: Եթե ինքնաարգելափակումը չտարածվի ամբողջ համակարգի վրա, ապա այն դառնում է ձևական միջոց: Իսկ եթե օրենքով ամրագրվում է, որ ինքնաարգելափակումը փոխանցվում է լիազոր մարմնին և հասանելի է դառնում բոլոր կազմակերպիչներին, ապա քաղաքացին ստանում է իրական, ոչ թե իմիտացիոն պաշտպանություն:

Այս գործիքը հնարավորություն է տալիս խաղամոլության ռիսկային կամ կախվածության փուլում գտնվող անձին ինքնակամ, արագ և իրավականորեն պաշտպանված կերպով դուրս գալ խաղային միջավայրից: Այն պատժիչ միջոց չէ: Այն պաշտպանական միջոց է, որի նպատակը՝

- կանխել կախվածության խորացումը,
- նվազեցնել ընտանեկան և սոցիալական աղետները,
- պաշտպանել անձի և նրա ընտանիքի ֆինանսական կայունությունը,
- և ապահովել քաղաքացու՝ «այլևս չխաղալու» որոշման իրական իրագործումը:

4. Ինչու է անհրաժեշտ, որ ինքնաարգելափակումը լինի արդյունավետ և ոչ ձևական

Ինքնաարգելափակման մեխանիզմը կաշխատի միայն այն դեպքում, եթե այն լինի իրական, պարզ, տեսանելի և հետևանք առաջացնող: Եթե քաղաքացին կարող է նույն օրը կամ հաջորդ օրը հեշտությամբ նոր հաշիվ բացել նույն կամ այլ կայքում, ապա նման մեխանիզմը չի լուծում խնդիրը:

Ուստի անհրաժեշտ է, որ օրենքը պարտադրի՝

- կայքերում և հավելվածներում ունենալ հստակ տեսանելի ինքնաարգելափակման պատուհան,
- դրա կիրառումը համարել լիազոր մարմնին դիմում ներկայացնելու փաստ,
- արգելափակումից հետո բացառել նույն անձի նոր մասնակցությունը ոչ միայն տվյալ, այլ նաև այլ լիցենզավորված հարթակներում,
- ապահովել, որ ինքնաարգելափակված անձը կարողանա միայն ստանալ իր հաշվին առկա միջոցները, բայց չկարողանա կատարել նոր խաղադրույքներ կամ լիցքավորումներ:

Այս մոտեցումը հիմնված է պարզ տրամաբանության վրա. եթե այսօր մարդը կարող է իր տան պայմաններում, մի քանի րոպեում, առցանց վարկ վերցնել և նույնքան արագ կորցնել այդ գումարը խաղերում, ապա պետությունն ու ոլորտը պարտավոր են նրան տրամադրել նույնքան հասանելի և արդյունավետ հակառակ գործիքը՝ ինքն իրեն համակարգից արգելափակելու հնարավորությունը:

5. Միջազգային փորձ

Ինքնաարգելափակման ինստիտուտը լայնորեն կիրառվում է մի շարք զարգացած երկրներում և համարվում է պատասխանատու խաղային քաղաքականության առանցքային բաղադրիչ:

Մեծ Բրիտանիայում գործում է GAMSTOP ազգային համակարգը, որը պարտադիր է բոլոր լիցենզավորված առցանց խաղային օպերատորների համար: Քաղաքացին մեկ դիմումով կարող է արգելափակել իրեն բոլոր լիցենզավորված հարթակներում, իսկ օպերատորները պարտավոր են կանխել ինչպես մուտքը, այնպես էլ նոր գրանցումը:

Իտալիայում գործում է կենտրոնացված ինքնաարգելափակման ռեեստր՝ պետական վերահսկողությամբ, որի շնորհիվ արգելափակված անձը չի կարող օգտվել որևէ լիցենզավորված խաղային հարթակից:

Շվեդիայում գործում է Spelpaus պետական համակարգը, որի միջոցով քաղաքացին մեկ դիմումով արգելափակում է իրեն ամբողջ երկրի բոլոր լիցենզավորված օպերատորների մոտ, և արգելափակումը գործում է անմիջապես:

Գերմանիայում գործում է OASIS ազգային ռեեստր, որը պարտադիր է բոլոր օպերատորների համար, և ինքնաարգելափակված անձը չի կարող գրանցվել կամ խաղալ որևէ լիցենզավորված հարթակում:

Սինգապուրում ինքնաարգելափակման և պարտադիր արգելափակման մեխանիզմները կիրառվում են որպես սոցիալական պաշտպանության գործիք՝ ուղղված խնդրահարույց խաղի կանխարգելմանը:

Այս փորձը ցույց է տալիս, որ առաջարկվող մոտեցումը ոչ միայն արդիական է, այլև լիովին համահունչ է միջազգային լավագույն փորձին: Այս երկրներում պետությունն ընդունում է, որ խաղային կախվածությունը միայն անհատի անձնական խնդիր չէ, այլ հանրային առողջության, սոցիալական կայունության և ընտանիքների բարեկեցության խնդիր, որի դեմ անհրաժեշտ են ոչ թե ձևական, այլ գործնականում աշխատող պաշտպանական գործիքներ:

Եզրակացություն

Վերը նշվածը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում խաղային գործունեության ոլորտում անհրաժեշտ է ուժեղացնել կանխարգելիչ և պաշտպանական կարգավորումները: Խաղադրույքների ծավալների ավելի քան 35-ապատիկ աճը, սոցիալական խոցելի խմբերի նկատմամբ գործող օրենքի անբավարար պաշտպանական ազդեցությունը, ինչպես նաև խաղամոլության աճող սոցիալական հետևանքները հիմք են տալիս վերականգնելու նախկինում առաջարկված կարևոր սահմանափակումները և ներդնելու ինքնաարգելափակման գործնականում արդյունավետ մեխանիզմ:

Առաջարկվող նախագիծը միաժամանակ լուծում է երկու կարևոր խնդիր՝

- առաջինը՝ սահմանափակում է խաղային գործունեության հասանելիությունը այն խմբերի համար, որոնց ներգրավվածությունն առավել մեծ սոցիալական վնաս կարող է առաջացնել,

- երկրորդը՝ իրական հնարավորություն է տալիս այն քաղաքացիներին, ովքեր ցանկանում են դադարեցնել խաղալը, իրավականորեն և տեխնիկապես պաշտպանել իրենց սեփական կործանարար վարքագծից:

Այսպիսով, առաջարկվող կարգավորումները միտված են ոչ թե խաղացողների կամ բիզնեսի դեմ պատժիչ քաղաքականության իրականացմանը, այլ՝

- սոցիալական խոցելի խմբերի պաշտպանությանը,
- պետական միջոցների նպատակային օգտագործման ապահովմանը,
- ընտանեկան ու ֆինանսական կործանման կանխարգելմանը,
- և հանրային շահի պաշտպանությանն ընդհանրապես: